

Քրիստոս աւրհնեաց զերկոսին.
 աւրհնեացէ զյարկս երկրպագուաց իւրոց.
 զի տեսցէ զսիրաս սրբոց իւրոց,
 եւ տացէ աճուան խնդրողաց իւրոց:
 50 Ձկենդանիս եւ զննջեցեալս ձեր քաւեացէ յաշխարհն երկրորդ.
 ուրախ լիջիք առ սեղան նորա,
 որ աստ ուրախ արարէք զճառայս նորա:

Հրտ. Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՍՏԵՓՆՈՍ ԸՍՈՂՆԻԿ ԵՒ ԿՈՄՍՆՉՆԻՔ

1. ԵԿԱՄՈՒՏ ՏԱՐՐՆԵՐ ՍՏ. ԱՍՈՂՆԻԿԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ: 2. Գ. 20 ԵՒ 22 ԽԱՐԳԱՆՈՒԱԾ: 3. ԲՈՒԼԳԱՐԱՅ ԲՈՐԻՍ Բ. ՅԱՐՆ ԵՒ ԵՂԱՅՐՆ ԲՈՒՄԱՆՈՍ: 4. ԿՈՄՍԱԶԱԳ ԵՂԱՅՐՆԵՐԸ: 5. ԱՂՈՒՄԻԱՆ ԵՐՐՈՐԳ ՈՐԳԻՆ ԳՐԻԳՈՐ ՏՈՒԿ

1.

Ստեփանոս Ասողնիկ Տարօնեցի գրած է իր Պատմութիւնն տիեզերական 1004ին իբրև տարեգրութիւն երեք գրքերու մէջ, որոնք կը ներկայացնեն հին, միջին եւ նոր դարերու պատմական անցքերը, սկսեալ Ադամէն մինչև իր օրերը, կարճ ի կարճոյ, համառոտախօս: Հին եւ միջին դարերու համար ունեցած է աղբիւր հայ եւ հայերէն թարգմանուած. օտար պատմագրութիւնները. ինքնակաց պատմիչ է 930—1003 տարիներու համար: Խոյս տուած է դաւանարանական հարցերէ եւ վիճարանութիւններէ. զգուշացած է սղբերգութիւններէ, միշտ հետամուտ սակաւախօսութեան, «զի ոչ ճառից նն ժամանակ(ը), այլ դոյզն յիշատակարանաց» (էջ 275. հրտ. Մալխասեան):

Աչքի առաջ ունենալով Պատմութեանս այս նկարագիրը, հարկադրուած ենք իբրև եկամուտ նշաւակել այն բոլոր լայնածաւալ եւ կարճատոս տեղիքները, որոնք կը հակասեն պատմագրին սկզբունքներուն:

Ասոնց են.

ա. Թուղթ ներսէս Գ. կաթողիկոսի առ Կոստանդին Կայսր. Բ. 2, էջ 89, տ. 23—98, տ. 14. անհարազատ թուղթ մը, որ նաեւ Սերիոսի Պատմութեան մէջ ներմուծուած է:

բ. Թուղթ առ մետրապոլիտն Սերաստիոյ, գրեալ հրամանաւ Խաչիկ կաթողիկոսի. Գ. 21, էջ 202—243:

գ. Նախարան առ մետրապոլիտն զրուած Թուղթին. Գ. 20, էջ 201—202:

դ. Վերջարան նոյն Թուղթին. Գ. 22, էջ 244—245:

ե. Անդրադարձութիւն Գ. 20 եւ 22 գլուխներուն. Գ. 24, էջ 246, տ. 1—6:

զ. Անդրադարձութիւն Գ. 20 գլուխին. Գ. 43, էջ 276, տ. 1—4:

է. Հատուած մը Բ. 2, էջ 87, տ. 16—88, տ. 19:

ը. Հատուած մը Գ. 7, էջ 178, տ. 19—179, տ. 7:

թ. Ա.—Գ. գիրքերու զլիակարգութիւններն եւ խոստարանութիւնները, պատրաստուած շատ վերիվերոյ:

Յիշուած ա—ը մեծ եւ փոքր ներմուծութիւնները կը շօշափեն առհասարակ դաւանարանական խնդիրներ եւ վէճեր, յուզուած Հայոց եւ Հոռոմոց մէջ:

Այստեղ մենք նկատի պիտի առնենք Գ—Գ տեղիքները եւ այն ըստ մասնէ միայն, որոնք սերտիւ կապուած են իրարու հետ:

Խմբագիրը Գ. 20 գլուխը կը խմբագրէ այսպէս. «Յաղագս անցուցանելոյ քաղաւորին վասլի ի ժողովարանէս Հայոց յաշխարհն Մակեդոնացոց. եւ հալածանք ի ձեռն Մետրապոլիտն Սերաստիոյ:

Այլ յորժամ էր ի Բաղդատ թագաւորն Վարդ եւ խաղաղանայր թագաւորութիւն վասլին՝ կամեցաւ յազգէն Հայոց որ ընդ իւրով թագաւորութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդզէմ Բուլղարացն, զի շինեցեան զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյորովս յաշխարհն յայն:

Եւ կանացի հովիւքն եւ մետրապոլիտն Սերաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ: Եւ զբռնութիւն ի ձեռն առեալ սկսաւ տանջել զքահանայս վասն հաւատոյ՝

եւ զգլխաւոր քահանայս Սերաստիոյ քաղաքին երկաթեղէն կապանօք հասուցանէր ի դուռն թագաւորին: Եւ ի բանտի չարչարեալ զաւագն երկցանցն զԳարրիէլ սպանին. զի էր այր ծեր եւ իմաստիւք լի եւ քաջապիտոյ ի հաւատս աստուածեղէնս: Այս եղև ի ՆԼԵ (986) թուականին: Իսկ այլք յաննչան քահանայիցն եւ երկու եպիսկոպոսունք Սերաստիոյ եւ Լաուիոյ, Սիօն եւ Յովհաննէս, ի ձեռն նոյն մետրապոլիտն ընկալան զԺողովուրդիկեղոնի, ի բաց կայով ի միաւորութենէն Հայոց: Եւ յայնմ հետէ արգելին զժամայն Հայոց ի քաղաքէն Սերաստիոյ, մինչև երկու թագաւորին վասլի յաշխարհն արեւելից. զոր յիւրում տեղւոյն ասացուք:

Եւ ապա մետրապոլիտն այն եւ այլ մետրապոլիտք սկսան թուղթս մեծամեծս գրել առ տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս: Որոց ընդզէմ պատասխանեալ քաջակորով իմաստիւք յառաջասցեալ վարդապետն. զոր պարտ համարեցաք զմի ի Թղթոցն կարգել յայսմ վայրի» (էջ 201—202):

Կը յաջորդեն Գ. 21. «Պատասխանի Թղթոյն Մետրապոլիտն Սերաստիոյ, գրեալ հրամանաւ տեսուն Խաչիկայ Հայոց կաթողիկոսի: — Աստուածային վհահազոյն քան զմիտս...» (էջ 202—243) եւ Գ. 22. «Թէ զիւրդ չարաչար մահուամբ մեռաւ (Ձ. սատակեցաւ) մետրապոլիտն Սերաստիոյ եւ վասն քաղաւորացն Բուլղարաց, որք սպանին զնա: — Իսկ յետ ընդունելոյ զԹուղթս դայս՝ ամօթալից լինէր մետրապոլիտն այն: Բայց ոչինչ թուլացաւ յիւրմէ չարութենէն: Այլ ի նմին ամի առաքեաց զնա թագաւորն վասլի յաշխարհն Բուլղարաց՝ խաղաղութիւն առնել: Եւ նոցա խնդրեալ զբոյր թագաւորին վասլի ի հարսնութիւն ինքեանց. եւ տուեալ թագաւորին կին մի ի ծառայից իւրոց, ի կերպ քեռն իւրոյ՝ առաքեաց ի ձեռն մետրապոլիտն: Եւ յերթալն յաշխարհն Բուլղարաց՝ ծանեան զկինն զայն. եւ դատեալ զմետրապոլիտն իբրև զչուն եւ խարբայ՝ ցօղուն եւ ժփան պատեալ զնովաւ՝ հրով տոչորեցին թագաւորն Բուլղարաց. զի էին նոքա երկու եղբարք, որք Կոմսաձաղքն կոչէին...» (էջ 244):

Գ. 24. «Եւ յայսմ ամի, որ էր ՆԼԵ (986) թուականն Հայոց, յորում չարաչար մեռանէր Գարրիէլ երէց Սերաստիոյ, եւ մետրապոլիտն, որ էր պատճառ սպանման

նորա՝ չարաչար մահու չարչարեալ ի Բուլղարս աստակէր վրէժխնդրութեամբն Աստուծոյ. եւ հարաւ զօրն վասլի յաշխարհն Բուլղարաց» (էջ 246, տ. 1—6):

Գ. 43. վասլի Բ. 1000 թուականին Տարսոնէն գալով «եւ ի կողմանս Մել(ի)տիոյ եւ ի կայն առաջի քահանայիցն Սերաստիոյ՝ հրամայեաց համարձակ լինել յամենայն գործս հաւատոց եւ հնչեցուցանել զձայն ժամահարի, զոր արգելեալ էր մետրապոլիտն, որպէս յառաջն ասացաք» (էջ 276):

Շատ աչքի կը գործեն Գ. 20 գլուխի խոստարանութեան քերականական անկանոնութիւնները. առաջին պարբերութեան սեռի խնդիրը կը պակսի. երկրորդ պարբերութեան «հարձանք» պէտք է ըլլար «յաղազ... եւ հարձանաց (Հայոց որ) ի ձեռն...»: Տարօրինակ է հոս «ի ժողովարանէս Հայոց» աստիճանը. բնաղբին ունի «յազգէն Հայոց» պէտք է իմանալ «ի դաւառաց Հայոց որ ընդ թագաւորութեամբ Հոռոմոց»: Նաեւ բնագիրը կ'երեւցնէ անկանոնութիւններ. «կասեցաւ յազգէն Հայոց... անցուցանել ի Մակեդոնիա». չկան ոչ բային տէրն եւ ոչ ալ «անցուցանել» բային խնդիրը: Եթէ «ընդզէմ Բուլղարացն» տարուած է տեղահան ժողովուրդը, տարուած է կուրի եւ ոչ թէ «զի չինեցեան զերկիրն»: «Որ եւ տարեալ բնակեցոյց». լուծած է «որ»ին յարաբերականը. իմանալու է «վասլի» թագաւոր: Այս տեղահանութեան պիտի անդրադառնամ ապա:

Բնագիրը հոս կ'ընդհատի յանկարծօրէն. կը յաջորդէ նոր հատուած մը, որ եկամուտ է, անյարիր նախորդին հետ եւ տարօրինակ իր սկզբնաւորութեամբ: Բովանդակութիւնն է «Հարձանք ի ձեռն մետրապոլիտն Սերաստիոյ», ինչպէս խոստարանութեան մէջ նշանակուած էր. լսենք. «Եւ կանացի հովիւքն եւ Մետրապոլիտն Սերաստիոյ սկսան նեղել զազգն Հայոց վասն հաւատոյ...»: «Հովիւք եւ Մետրապոլիտն Սերաստիոյ սկսան... եւ զբռնութիւն ի ձեռն առեալ սկսաւ...»: Այսպէս: Յոգնակին կզակի ի լիտուած. հարձանքն է Սերաստիոյ Սերաստիոյ զորում անուր լուծած է, թէ հոս եւ թէ յաջորդ գլուխներու մէջ: Հարձանքը տեղի ունեցած է Սերաստիա. «այս եղև ի ՆԼԵ (986) թուականին». կրկնուած եւ այլուր: Մետրապոլիտը Հայոց «զլիաւոր» քահանաները երկաթեղէն կապանքներով

Կ. Պոլիս կ'ուղարկէ. «զաւագն երեցանցն զՔարբէլ սպանին, զի էր այր ծեր»։ «Այլք յաննան քահանայեցն եւ երկու եզրակոպտուէք Սերաստիոյ եւ Լառիսոյ... ընկալան զժողովն Քաղկեդոնի»։ «Արգելին զժամաձայնն Հայոց», որ լուսն մինչեւ 1000 թուականը։

Հարածանքը տեղի ունեցած ըլլալու է նաեւ ուրիշ քաղաքներու մէջ, վասն զի «Մետրապոլիտն եւ այլ մետրապոլիտք սկսան թուղթս մեծամեծս գրել առ տէր Խաչիկ Հայոց կաթողիկոս»։ որոնց պատասխան տուած են «յառաջ ասացեալ վարդապետք»։ Կարեւոր համարած է խմբագիրը «զմի ի թղթոցն Հայոց վարդապետաց» զետեղել Պատմութեան մէջ. «Կարգել յայսմ վայրի»։ Այն է Սերաստիոյ մետրապոլիտն թղթոյն պատասխանը, գրուած «հրամանաւ» կաթողիկոսին։ Թէ ո՞վ է յանուանէ այդ թուղթը գրողը, չի գիտեր խմբագիրը. բայց գիտէ թէ ան «յառաջ ասացեալ վարդապետներէն» մէկն է։ Վաւերագիր մը, որ ոչ հեղինակին եւ ոչ ալ հասցեակիրին անունները կը կրէ, կը տուած էր արժէքէն։

Խմբագիրը երբ կը գրէ, թէ «եւ այլ մետրապոլիտք» թուղթեր գրած են, կ'երեւայ թէ ծանօթ էր իրեն Մելիտինէի (Մալաթիայի) մետրապոլիտն թուղթը, որուն պատասխանը գրած է նոյն Խաչիկ կաթողիկոսի «հրամանաւ» Սամուէլ Կամբջանցի. այս թուղթը պահուած է մեզի, որ խորագիր կը կրէ. «Տեառն Խաչիկայ Հայոց կաթողիկոսի բան խոստովանութեան, պատասխանի Յունաց գրոյն, զոր արձակեալ էր առ նա մետրապոլիտն Մելիտինոյ», որ ի լուսանցսն աւելի բացայայտ եւ աւելի հարազատ վերնագիրն ունի. «Թուղթ Սամուէլի Կամբջանցի Հայոց փելիսոփայի. պատասխանի թղթոյն Թէոդորոսի մետրապոլիտի Մելիտինոյ, գրեալ հրամանաւ Խաչիկայ Հայոց կաթողիկոսի. — Բերաւ գիր ողջունարեր... գլուխ եզրակոպտաց տէր Թէոդորոս մետրապոլիտ մայրաքաղաքից Մելիտինոյ...» (Գիրք Թղթոց, էջ 302—322)։

Այս երկու թուղթերու ներքին յատկանիշները, խաղաղական ոգին եւ ճարտար ջատագովութիւնը, մէկ գրիչ կը մատնանշեն. անստեղծ է՛ւ հոս է՛ւ հոն ներմուծուած ինչ ինչ հակառակախօս, առաւելապէս յոգնակի երկրորդ գէմբով արտայայ-

տութիւնք, որոնք այն ձեռքէ կը թուին, որ խմբագրած է չարաչար Ստեփանոս Սիւնեցւոյ խաղաղական թուղթն առ Գերմանոս (Գիրք Թղթոց, 373—395)։ Ստ. Ասողիկ, որ անձամբ ծանօթ էր «խմաստակ Սամուէլի» եւ կը դրուատէ զանիկա «բազմաշնորհ ի դիտութիւնս Գրոց սրբոց եւ յերգս երաժշտութեանց» (էջ 174), որ եւ է խօսք չ'ընէր անոր դրած թուղթերու եւ անոնց շարժառիթին մասին։

Խմբագիրը գիտէ թէ Մետրապոլիտը այդ թուղթը ստանալէն ետքը «ամօթալից լի նէր... բայց ոչինչ թուլացաւ յիւրմէ չարութենէն»։

Նոյն տարւոյն, 986ին, Վասիլ կայսր Սերաստիոյ մետրապոլիտը Բուլղարիա կ'ուղարկէ «խաղաղութիւն առնել»։ Բուլղարներու «թագաւորները» պայման կը դնեն, կը խնդրեն կայսեր քոյրը «ի հարսնութիւն իւրեանց»։ Կայսրը փոխանակ իր քրոջ կ'ուղարկէ անոր նման «կին մի ի ծառայից (խմայիլը յաղախնայց) իւրոց» «ի ձեռն մետրապոլիտն»։ Խաղաղութիւնը կ'իմացուի. «եւ դատեալ զմետրապոլիտն իրրեւ զշուն եւ խարերայ... հրով տոչորեցին (զնա) թագաւորն Բուլղարաց»։ Այս թագաւորները «երկու եղբարք» էին։

Այս դէպքին միւսանգամ կ'անդրադառնայ խմբագիրը Գ. 24. նոյն տարին, երբ Գարբէլէ Էրէց մեռաւ «չարաչար», նաեւ մետրապոլիտը «չարաչար մահու չարչարեալ ի Բուլղարս սատակէր վրէժխնդրութեամբն Աստուծոյ»։ Նոյն տարւոյն նաեւ «հարաւ զօրն Վասիլ յաշխարհին Բուլղարաց», որ պատմուած էր նախորդ գլուխին մէջ։

Բիւզանդական աղբիւրներուն անձանօթ է, թէ Վասիլ կայսր Սերաստիոյ մետրապոլիտը խաղաղութեան համար Բուլղարներու «թագաւորներուն» պատգամաւոր գրկած ըլլայ. բայց ծանօթ է անոնց, թէ Վասիլ ի թոյրն Աննա 988ին ի հարսնութիւն տուած է Ռուսներու Վրադիմիր մեծ իշխանին¹։

Սերաստիոյ «Մետրապոլիտի» անձնաւորութիւնը հնարուած է. ինչ որ կը պատմու-

¹ H. Gelzer (Krumbacher, Geschichte de byzantinischen Literatur), S. 992. Հմմտ, Lebeau Histoire du Bas-Empire, tom XIV, Paris 1833 p. 176—178.

անոր դիտարանադնացութեան եւ սպանման մասին, առասպել է²։

Գարբերու ընթացքին, սկսեալ Զ. դարէն, Հայոց եւ Հռոմոց մէջ յուզուած են առաւել կամ նուազ չափով դաւանաբանական վիճաբանութիւններ, բարձրաստիճան եկեղեցականներու միջեւ թղթակցութիւններ, բայց թէ նա՞եւ Վասիլ Բ. կայսեր (976—1025) օրով նման վէճեր յարուցուած են, չի գիտեր ԺԲ. դարու հեղինակ Պաւղոս Տարօնցի. «Մեծ թագաւորն Հռոմոց Վասիլն զայդ ամենայն քննութիւնդ վասն հաւատոց ոչ է արարեալ ընդ Հայս», կը գրէ առ Թէոփիլտէ թուղթին մէջ (էջ 273)։ Եւ եթէ Տարօնցին Պաւղոս անտեղեակ է Սերաստիոյ Հայոց հարածանքին, պիտի հետեւցնենք, թէ ան չէր կարդացած Տարօնցի Ստեփանոսի Պատմութեան մէջ նման հարածանքի մը մասին։

Այն պարագան, որ խմբագիրը այնքան երկար կանգ առած է այս «հարածանքի» շուրջը, չորս գլուխներու մէջ անդրադարձած է անոր, ցոյց կու տայ, որ ճիշդ թափուած է մտացածին դէպքը իրրեւ սրտմական իրողութիւն հաւատացնելու համար։

Խմբագիրը մոլեռանդ հակաքաղկեդոնական մըն է, զայրացած ոգւոյ տէր. հոռոմատեանց մը, աղբիւրներու սղտորիչ, անվայելուչ համարձակախօս մը, լրջամիտ, պարկեշտասուն հեղինակ մը անուանարկող։ Կարելի էր չքմեղել զինքը, եթէ իր ստորագրութեամբ գրուածքի մը մէջ արտայայտած ըլլար իր սրտի զայրոյթը. բայց ան արտադեղած է իր զգածունները լրջամիտ, սըրբասնունդ, ողջախոհ հեղինակի մը, Ստեփանոս Ասողիկի անունը կրող զրուսածքին մէջ, որ յօրինուած է հրամանաւ Սարգիս կաթողիկոսի։ Այդ ողջախոհ հոգին չէր կրնար թոյլ տալ իր գրչին որդողոքս Եկեղեցւոյ հովիւները «կանացի»³ որակել, Մետ-

² Ն. Աղոնց, Samuel l'arménien roi des Bulgares, p. 13, n. 28.
³ Այսպէս «կանացի» որակուած են «հովիւքն եւ մետրապոլիտն», վասն զի երկար վարսեր կը կրէն։ Այս մասին ակնարկութիւն մը կայ նաեւ Խաչիկ կաթողիկոսի հրամանով գրուած թուղթին մէջ. «Իսկ զինչ վասն վարսաւոր գիտացք ասիցէք, զոր իրրեւ սահման քրիստոնէութեան զպղոսիկ ունիք» (Գ. 21, էջ 241)։ Այս թղթին տեղիքը (տ. 1—10) սակայն եկամտաւ կ'երեւայ. մինչ թուղթին հեղինակը մետրապոլիտն հետ եզակի երկրորդ գէմբով կը խօսի, հոս յանկարծ յոգնակի երկրորդ գէմբի կը փոխուի. կը կարծեմ, թէ նաեւ այլօր ներմուծուածներ կամ փոփոխութիւններ կրած է թուղթս։

րապոլիտ մը «շուն եւ խարերայ» անուանել, եւ անոր սպանութիւնը ներկայացնել «չարաչար մահու չարչարեալ ի Բուլղարս սատակէր վրէժխնդրութեամբն Աստուծոյ». եւ այս առթիւ աւելարանութեամբ կրկնել թէ «եւ հարաւ զօրն Վասիլ յաշխարհն Բուլղարաց»։

2.

Խմբագիրը ոչ միայն ներմուծած է յիշեալ տեղիքները Ասողիկի Պատմութեան մէջ, այլ եւ խանգարած է Պատմութեան 969—986 տարիներու ժամանակագրութիւնը ետեւառաջութեամբ, յապաւումներով եւ յաւելուածներով։ Խմբագրուած են յատկապէս Գ. 20 եւ 22 գլուխները։ Բնագիրը մերձաւորապէս վերականգնելու համար անհրաժեշտ է առաջնորդ ունենալ Բիւզանդական աղբիւրները։ Սխալած է Ն. Աղոնց, երբ յեցած Ասողիկի Գ. 22 գլուխին վրայ, փորձած է սրբագրել բիւզանդական աղբիւրները։

Այս տեղ նկատի պիտի առնեմ Գ. 20 եւ 22, պատմական տեսակէտէ։

ՆԿԵՓՈՐՈՍ ՓՈԿԱՍ (963—969)

Ասողիկ իր Պատմութեան այժմեան օրինակին մէջ շատ հարեւանցի յիշած է Նիկիոսիոս Փոկասի (963—969) գործունէութեան մասին. կը յիշէ միայն. «Մա քաջապէս յաղթեաց Իսմայէլական զօրուն»։ 966ին կը վախճանի Տարօնի Աշոտ իշխանը «եւ Տարօնայ Հռոմք տիրեցին»։ Վարդ Փոկաս 968ին կ'արշաւէ Ապահունիք. ի հիմանց կը քանդէ Մանազկերտի սարիսպները. 969ին կը նուաճուի Անտիոքը։ Պատմագիրը յիշատակութիւն չ'ընէր ամենեւին Բիւզանդոնի Բուլղարաց եւ Ռուսներու հետ վարած քաղաքականութեան մասին։ Այս լուսնները կը վերագրեմ խմբագրի գործած աւերումին։ Գ. 22 (էջ 244) հատուածս. «Այլ ի նմին ամի (986) առաքեաց (Վասիլ Բ.) զնա (զՄետրապոլիտն Սերաստիոյ) յաշխարհն Բուլղարացն խաղաղութիւն առնել. եւ նոքա (թագաւորն) խնդրեալ զքոյր թագաւորին Վասիլ ի հարսնութիւն ինքեանց. եւ տուեալ թագաւորին կին մի ի ծառայից իւրոց ի կերպ քեռն իւրոյ առաքեաց ի ձեռն Մետրապոլիտն...», ցոյց կու տայ թէ Ասողիկ խօսած էր Նիկիոսիոսի Բուլղար Պետրոս ցարին ուղարկած գեղարանութեան մասին։ Հոս սկզբնական բնագիրը աղճատուած է խմբագրէն։

Բիւզանդական աղբիւրները կը պատմեն, թէ Բուլղար պատգամաւորներ Պետրոս ցարի կողմէն ներկայացան Նիկիփորոս Փոկաս կայսեր եւ խնդրեցին տուրքը, զոր յանձն առած էին վճարել նախորդ կայսերը: Նիկեփոր չարաչար վարուեցաւ անոնց հետ: Չանոնք ձեռնունայն արձակելէն ետքը Կալոկիւր պատրիկը Խրիմի Ռուսներուն զրկեց, յոր դորեւր անոնց իշխանը Սվեատոսլաւը, որ արչաւէ Բուլղարիա: Իշխանը յօժարութեամբ յանձն առաւ անաշարիկը եւ անյապող շարժեց իր նաւատորմիդը դէպի Բուլղարիա: Իր քով մնաց Կալոկիւր. եւ հաճոյացաւ իշխանին. համոզեց զանիկա, որ Բուլղարիա նստի. եւ նպաստէ իրեն, որ կայսերական զաճի ինքը տիրանայ: Այս դաւաճանական ծրագիրները կ'իմանայ Կայսրը. եւ կը փութայ հաշտութիւն կնքել Բուլղարներու հետ ընդդէմ Ռուսներուն. խօսակներ կ'ուղարկէ Նիկիփոր պատրիկը, կոչուած Երուսիկոս, եւ Փիլիթէոս Եւխայիտացոց աթոռակալը (Լեւոն Սարկաւազ, Ե. 3, էջ 79) այս կը պատահի 969ին. Կայսրը կ'առաջարկէր Բուլղարներու Պետրոս ցարին նոյն իսկ խնամութիւն երկու արքունեաց, խնդրելով ցարին երկու դուստրները ի հարսնութիւն Ռոմանոս կայսեր երկու զաւակներու: Դաշնագրութիւնը կնքուեցաւ:

Այս միջեցին Սվեատոսլաւ անցաւ Դանուբը 60.000ով. Բուլղարները 30.000ով բախեցան անոնց հետ եւ պարտուեցան: Այս ճակողութիւնը պատճառ եղաւ Պետրոս ցարին մահուան. զոր լսելով կայսրը փութաց ցարին երկու որդիքը Բուլղարիա վերադարձնել, որոնք մինչեւ այն ժամանակ Կ. Պոլիս կը գտնուէին:

Կայսրը, որ մտադիր էր անձամբ արշաւել Բուլղարիա, հեռացնելու անկէ Ռուսները, սպանուեցաւ քիչ յետոյ: Կայսր հոգաւորեցաւ Յովհաննէս Չմշկիկ, զոր Ստ. Ասողանի Կիւր-ժան կ'անուանէ (969 ղեկտ. 10. հմմտ. Lebeau, ԺԴ., էջ 84—103):

Այս տուեալներու վրայ յեցած կարելի է վերակազմել խաթարուած բնագիրը այսպէս. «Այ ի նմին ամի առաքեաց զՆիկիփոր պատրիկի եւ գփիլոսէոս գաբռուակալն Եւխայիտացոց, թագաւորն Նիկիփոս յաշխաբէն Բուլղարաց խաղաղութիւն առնել. եւ նորա խնդրեալ գերիւսիսն դստերս թագաւորին Պետրոսի ի հարսնութիւն երկուց որդի-

ւոցն Ռոմանոսի: Եւ տուեալ թագաւորին Բուլղարաց ի ձեռն մետրապոլիտն ||||:»

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉՄՇԿԻԿ (969, ԴեհՏ. 10—976)

Սվեատոսլաւ զբաւեց Պրեսլաւեց մայրաքաղաքը: Բորիս Բ. ցարը, ինչպէս նաեւ թագաւորական ընտանիքը եւ ցարեկայր Ռոմանոս դերի րուսուեցան: Յոյները չկրցան որ եւ է կերպով օգնել Բուլղարներու:

Չմշկիկ կայսր կարեւորագոյն համարեցաւ նախ արեւելքէն պետութեան սպառնացող թշնամիները վանել (970): Վերադարձին բերաւ հետը Միջագետքն անհանդուտացնող Պաւլիկեան աղանդաւորները, զորոնք զետեղեց Փիլիպպոսպոլսոյ շրջակայքը, թէ երկիրը մշակելու եւ թէ թումր մը կազմելու Բալկանեան վայրագ ժողովուրդներու դէմ¹: Հրաման ստաւ ուղարկեց արեւելք փութանալի զօրամասեր անցնել արեւմուտք², զորոնք Վարդ Սկլերոսի հրամանատարութեան տակ Թրակիա նստեցուց: Այս բանակի մէջ էր հայրական դաւաճանքէն հանուած հետեւակազուցը, «սաղարք» կոչուած:

Նոյն 970 տարւոյն ապստամբեցաւ կայսեր դէմ Վարդ Փոկաս. կայսրը ուղարկեց անոր վրայ Վարդ Սկլերոսը. որ յաջողեցաւ սիրաչափ ապստամբը, զոր Կայսրը ապա աքսորից Բիոս կղզին: 971 զարնան մեկնեցաւ կայսրը դէպի ճակատ ընդդէմ Ռուսներու: Միջամուխ եղաւ Բուլղարիա. յաղթական յառաջացաւ. առաւ Պրեսլաւեց. գտաւ հոն Բորիս Բ. եւ իր ընտանիքը եղբոր հետ: Պատուեց զինքը ցար յորջորջանքով: Պատերազմը շարունակուեցաւ մինչեւ Ռուսներու պարտութիւնը: Բուլղարիա ենթարկուեցաւ Բիւզանդական իշխանութեան:

Կայսրը վերադարձաւ փառօք Կոստանդնուպոլիս, տանելով հետը Բորիս Բ. եւ ընտանիքը, եւ եղբայրն Ռոմանոս: Այն տեղ

¹ Յովհ. Չմշկիկ պատերազմեցաւ Պաւլիկեան եւ նման վայրագ ժողովուրդներու դէմ եւ հաւաքեց զանոնք Ասիայէն իրրեւ ստրուկ եւ Խալիբներէ եւ Հայքէ բնակուած երկիրներէն փոխադրեց Թրակիա: Ան պարտադրեց զանոնք, որ նստին Փիլիպպոսպոլսի շրջակայքը, ոչ այնչափ զանոնք անբոյթ եւ ամուր քաղաքներէ հետեւ պահելու նպատակով, որպէս զի ձեռնահաս չըլլան զբաւելու եւ բռնապետելու անոնց, որչափ դիտուածով, որ անոնք Միւթացոց սոսկապետութիւններու դէմ իրրեւ սպառնալու պահակներ կանգնին (Անոս Կոմնենուսի, Ալեքսիազ, ԺԴ., 8, 5, էջ 179—180, տպ. Leib, Պարիս 1945): Հմմտ. Lebeau, անդ, 106:

² Կեղրեհոս, էջ 384. «Թղթովք զբերովք սայր փութանակի յարեւելից զզօրս յարեւմուտս անցուցանել»:

առաւ անոր գլուխէն ցարական թագը, մերկացուց ցարական հանդերձներէ, փոխարէն տալով մազիտորոս տիտղոսը: Իսկ անոր եղբայրը Ռոմանոս ներքինացուեցաւ:

Հետեւելով պատմութեան այս ընթացքին՝ կը վերակազմեմ Գ. 20 գլուխի առաջին հատուածը այսպէս, իրրեւ շարունակութիւն էջ 183, տ. 23 հատուածին.

Վարդ Փոկաս կ'ապստամբի. «ընդ որ պատերազմեալ յաղթողն Կիւր-ժան՝ յաղթեաց եւ էարկ գ'վարդ ի բանտ ի կղզին» (Բիոս). շարունակութիւն էջ 201, տ. 8—13. «Յորժամը [...] խաղաղանայր թագաւորութիւն [Վասիլին] (Խաղաղ Կիւր-ժանի) կամեցաւ յազդէն Հայոց որ ընդ իւրով իշխանութեամբն՝ անցուցանել ի Մակեդոնիա ընդդէմ Բուլղարացն, զի շինեացն զերկիրն: Որ եւ տարեալ բնակեցոյց զյուրովս յաշխարհն յայն»: Կը շարունակուի էջ 183, տ. 23. «Եւ ինքն զնայց յաշխարհն Բուլղարաց պատերազմել ընդ նոսա: Որոց զազդն Ռուզաց օգնական առեալ ելանն ի մարտ ընդդէմ նորա. եւ ի ճակատին ընդ միմեանս՝ զերկուս թեւ ճակատուն Յունաց վարէին Ռուզն: Իսկ թագաւորն ամենայն հետեւակ զօրուն Հայաստանօքն անշարժ մնացեալ ի միջոցի ճակատուն, որ քաջապէս նահատակեալ զունգ հետեւակացն, որ սաղարքն ասին՝ առաջի թագաւորին պատանեալ զվահանափակն որ ընդդէմ նոցա. ընդ թագաւորին ամենայն հեծեալուցն զօրօքն մտեալ եւ սուր ի դորժ շահատակեալ՝ սրախողիտող զնոսա առնելով եւ ցիբ եւ ցան վայրացն տուեալ՝ ի հնազանդութիւն նուաճեաց զազդն Բուլղարաց»: Կը շարունակուի էջ 244, տ. 14.

|||| զի էին նոքա երկու (կարդա չորք) եղբարք, որք Կոմսաձագքն կոչէին, անուն երիցուն Սամուէլ, յազդէս Հայոց, ի զաւանէն Դերջանայ, զոր ընդ զունգս սաղարացն տարեալ էր զնոսա թագաւորն Վասիլ (Խաղաղ Կիւր-ժան) ի Մակեդոնիա պատերազմել ընդդէմ Բուլղարացն: Որոց ի զիւրող ժամու ապստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ զնայցին առ թագաւորն Բուլղարաց, [որ էր Կուրտ], եւ ըստ քաջութեան իւրեանց մեծացան յաչս նորա: Եւ ապա յետ այսորիկ թագաւորն Յունաց Վասիլ (կարգա՛ Կիւր-ժան) ի պատերազմի կալաւ զթագաւորն Բուլղարաց [զկուրտ ներքինին]:

Իսկ Կոմսաձագքն տիրեալ ի վերայ աշխարհին Բուլղարաց՝ ընդդէմ կացին խիտ մարտիւք՝ թագաւորին Յունաց (Վասիլ), զոր ըստ ժամանակին ասասցուք»:

3.

Երբ կը գրէ Խմբագիրը, թէ Վասիլի քոյրը Բուլղարներու «թագաւորաց» համար «ի հարսնութիւն» խնդրուած է, անշուշտ աչքի առաջ ունէր Բորիսն եւ անոր «կուրտ» եղբայրը: Այս «թագաւորաց» կը հայի «զի էին նոքա երկու եղբարք»: Ինձ կը թուի թէ պակաս մ'ունի բնագիրը եւ պէտք է իմանալ «... զի էին նոքա չորք եղբարք» կոմսաձագք, որոնք «զնայցին առ թագաւորն Բուլղարաց» առ Բորիս Բ., որ սակայն «կուրտ» էր, թէեւ խմբագիրը երկիցս այսպէս կ'որակէ: Տեղիքս «զկուրտ ներքինին» պէտք է կարգաւ «զկուրտն, որ է ներքինի»:

Կոմսաձագքերու գալուստն Դերջանէն եւ փախուստը պէտք է ենթադրել 970 տարւոյն, երբ Բուլղարներու ցարն էր Բորիս Բ.: Սա եւ իր եղբայրն, ինչպէս յիշեցինք վերը, եւ ինչպէս կ'ըսուի հոս «թագաւորն Յունաց Կիւր-ժան (ո՛չ Վասիլ) ի պատերազմի կալաւ զթագաւորն Բուլղարաց» 971ին եւ տարաւ Կ. Պոլիս: Ասոնք կայսեր մահէն ետքը, Վասիլ Բ. ի օրով փորձեցին փախչիլ Բուլղարիա յուսով, թէ պիտի տիրանան զաճին: Բայց Բորիս, որ յունական տարազ կը կրէր, հազիւ միջամուխ Բուլղարիոյ սահմանը՝ յոյն կարծուելով կը սպանուի Բուլղարէ մը. իսկ Ռոմանոս ներքինին կը հասնի բարեաւ Բուլղարիա եւ կ'ենթարկուի ինքնակամ տիրող իշխանութեան, որ Կոմսաձագքերու ձեռքն էր: Ուստի «Կուրտն» կամ «ներքինին» Ռոմանոս երբեք թագաւոր չէ եղած: Վասիլ Բ. կայսր արչաւեց Բուլղարիա եւ պարտուեցաւ 986ին: Ասողնիկ երբ կը գրէ, «զոր ըստ ժամանակին ասասցուք», կ'ուզէ ըսել, թէ ապա ժամանակագրական կարգով պիտի խօսի: Այժմեան բնագրի մէջ անմիջապէս այս հատուածին յաջորդող գլխուն մէջ կը յիշէ Վասիլ Ա. արչաւանքը:

Գ. 20 գլուխի առաջին երկու տողերը «Այլ յորժամ էր ի Բաղդատ թագաւորն վարդ (Սկլերոս) եւ խաղաղանայր թագաւորութիւն Վասիլին» անփոփոխ կը պատկանին Գ. 23ին իրրեւ սկզբնաւորութիւն (Չմշկիկ «Եւ զկնի այսորիկ»): Այս Գ. 23ի վերջաւորն

բուժիչն պէտք է նկատել Գ. 24ի սկիզբը «եւ յայտ ամի, որ էր ՆԼԵ թուականին» (էջ 246, 1), վերականգնելով «Այս եղև ի ՆԼԵ թուականին»: Հոս «Հայոց» յայտնապէս խմբագրին յաւելուածն է, Ասողիկին անսովոր, որ կը գործած է լոկ «թուական»:

4.

ԿՈՄՍԱԶԱԳՔ

Կեղրենոս կը գրէ, թէ Յովհ. Չմշկիկ Կայսեր մեռնելէն (976) ետքը «սպտամբեցան Բուլղարները. եւ չորս եղբայրներ իրենց մէջ բաժնեցին պետութիւնը, Դաւիթ, Մովսէս, Ահարոն եւ Սամուէլ. որոնք որդիներն էին Բուլղարներու քով մեծ ճոխութիւն վաճառող կոմսի մը < որուն անունն էր Նիկողայոս. իսկ անոնց մայրն էր Հոսիփոսէ >. այս պատճառաւ ալ անոնք կոմսաձաղեր (κομητοποιοι) կը կոչուէին: Վասն զի Պետրոս (ցարի) մեռնելէն ետքը անոր տոհմէն եղածները կոտորուեցան, իսկ անոր որդիք Բորիս եւ Ռոմանոս Կոստանդնուպոլիս տարուեցան, հոն Բորիս Չմշկիկէն մագիստրոս տիտղոսով պատուեցաւ. իսկ Ռոմանոս՝ Յովսէփ ներքինապետէն ներքինացուեցաւ...:

Չորս եղբայրներէն Դաւիթ շուտ վախճանեցաւ. Մովսէս Սեուս պաշտպանած ժամանակ սպանուեցաւ. իսկ Ահարոնը սպաննեց (իր եղբայրն) Սամուէլ, պատրուակ բերելով թէ յունամէտ է ան, աւելի ճիշդ միապետելու գիտումով, եւ անոր որդիները անճիտեց. միայն Յովհաննէս-Վլադիսլաւ, ազատեցաւ չնորհիւ Սամուէլի Ռոզոմիր որդւոյն. Սամուէլ մնաց առանձին» (Կեղր., էջ 435):

Եռանկիւնի փակազծի մէջ առնուած Նիկողայոս եւ Հոսիփոսէ անունները յաւելուածն են Միքայէլ Դեոլի եպիսկոպոսին, որ Սկիւլիցէս-Կեղրենոսի Վիեննայի ձեռագրին մէջ ներմուծած է ուրիշ բազմաթիւ կարեւոր լուսանցագրութիւններու շարքին¹: Նոյնը կը հաստատէ Սամուէլի բուլղարներէն արձանագրութիւնը² որուն թարգմանութիւնն է:

¹ V. B. Prokič, Die Zusätze in der Handschrift des Johannes Skylitzes Cod. Vindobonensis hist. graec. LXXIV (Dissertation), München 1906.

ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ԵՒ ՈՐԴԻՈՅ ԵՒ ՍՐԲՈՅ ՀՈԳՐՈՅՆ. ԵՍ ՍԱՄՈՒԷԼ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ, ԱՐԱՐԻ ԶՅԻՇԱՏԱԿ ՀՕՐ ԻՄՈՅ, ՄՕՐ ԻՄՈՅ ԵՒ ԵՂՐՕՐ ԻՄՈՅ Ի ՎԵՐԱՅ ԽԱԶՔԱՐԻՍ: ԱՅՍ ԵՆ ԱՆՈՒԱՆՔ ՀԱՆԳՈՒՅՆԵԼՈՅՆ. ՆԻԿՈՂԱՅՈՍ ԾԱՌԱՅ ԱՍՏՈՒԾՈՅ. (ՀՈՒՓՍԻՄ)Է ԵՒ ԴԱՒԻԹ. ԳՐԵՅԱԻ ՅԱՄԻ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ 6501. Ի Զ. ԲՆԴԻԿՏԻՈՆԻ (992—993) 2:

Նիկողայոս կոմսի մասին գիտենք միայն թէ էր ազգեցիկ եւ յարգուած անձնաւորութիւն մը Բուլղարներու քով: Եթէ ըստ Ասողիկի անոր որդիները «յազգէն Հայոց» են, «ի դաւառէն Դերջանայ» եւ Սամուէլ իր արձանագրութեան մէջ եւ Միքայէլ եպիսկոպոս կը վկայեն թէ Նիկողայոսի կինը Հոսիփոսէ կը կոչուէր, անուն մը, որ հայկական է եւ Հայոց քով միայն գործածական, պիտի հետեւցնենք, թէ Նիկողայոս իրբեւ Կոմս ծառայած է Բիւզանդական բանակի մէջ, ապրած է Դերջանի շրջանի մէջ, ամուսնացած է Հոսիփոսէ հայուհիի հետ եւ ծաղկեցուցած է չորս կորովի դաւակներ, ամէնն ալ սուրբ դրենական անուններով: Որովհետեւ այդ Կոմսաձագերը 970ին արեւելքէն արեւմուտք կը տարուին ծառայելու «սաղարքի», այսինքն հետեւակազօրին մէջ, որ Հայերէն կազմուած էր, պէտք է ենթադրենք թէ անոնք այս տարւոյն 18—25 տարեկան հասակի մէջ ըլլալու էին. ուստի ծնած 945—952ին մօտաւորապէս: Այս դէպքին Նիկողայոս 945էն քիչ յառաջ սկսած ըլլալու է իր պաշտօնավարութիւնը Դերջանի մէջ:

Այն պարագան, որ Դերջանցի Կոմսաձագերը «ի զիպող ժամու սպստամբեալ ի թագաւորէն Յունաց՝ գնացին առ թագաւորն Բուլղարաց» (970), մտածել կու տայ թէ անոնք շարժառիթ մ'ունէին այս քայլը առնելու համար. գիտէին թէ իրենց հայրը բուլղար էր, ազնուական տունէ, յարգուած ժողովուրդէն, ինչպէս կը գրէ Կեղրենոս. թէ եւ այս մասին կը լռէ Ասողիկ, վերագրելով անոնց յաջողութիւնը Բուլղարիայի մէջ արիական շահատակութեանց. «ըստ քաջութեան իւրեանց մեծացան յաչս նորա» (Թագաւորին). եւ կը յաւելու. «իսկ կոմսաձագըն տիրեալ ի վերայ աշխարհին Բուլղարաց՝ ընդդէմ կացին ի իստ մարտիք՝ թագաւորին Յունաց» Վասի: Պատմագիրը աչքի առջև ունի 986—1003 տարիները:

Չորս եղբայրներէն մէկը՝ Դաւիթ վաղամեռիկ եղած է 992/3էն յառաջ, ըստ Ար-

² Առնց, անդ, էջ 40:

ձանագրութեան: Մովսէս, Կեղրենոսի համաձայն, ինկած է Սեուսի պաշտպանութեան ժամանակ (999ին. հմմտ. Lebeau անդ, 194—195): Իսկ Ահարոն սպանուեցաւ իր եղբոր Սամուէլի կողմէ եւ որդիքը կոտորուեցան բացի մէկէն, Յովհաննէս-Վլադիսլաւէ, զոր ազատեց Ռոզոմիր թագաւորանգր: Այս պատահած ըլլալու է 1000 թուականէն ոչ շատ վերջը: Սամուէլ մնաց միապետ: Մտաթէոս Ուռհայեցի յամն ՆԿ (1011/12) կը գրէ. «Չորսոտողով արար թագաւորն Վասիլ եւ դնայր ի վերայ աշխարհին Բուլղարաց եւ յաղթեաց թագաւորութեան նոցա եւ մաշեաց ի սուր սուսերի զրազում դաւառս մեծաւ բարկութեամբ. եւ յաւեր եւ ի դերութիւն մատնեաց զամենայն արեւմուտք եւ բնաջինջ երարձ զամենայն թագաւորութիւնս Բուլղարաց: Եւ զեղ մահու արուցանէր Ալուսիանին (Չ. Ալիօսիանին), առն քաջի, Բուլղարաց թագաւորին. եւ այսպիսի օրինակաւ հանէր զնա ի կենաց. առեալ զկին նորա եւ զորդիս արկանէր ի Կոստանդնուպոլիս» (էջ 46): Ասկէ Սամ. Անեցի (էջ 103), որ ունի տեղիքս. «կալաւ զարքայն Բուլղարաց զԿու(ր)ան, որ է Ալիօսիան»: Առանց տարակուսի Սամուէլ Անեցոյ քով «զԿուրան» եկամուտ յաւելուած է: Բայց թէ Ուռհայեցի ինչ աղբիւրէ առած է «Ալուսիան» անունը (որ ձեռագրաց մէջ աղճատուած է «Ալիօսման, Ալիօսիան, Ալիօսիան» (Ուռհ. 40, 46), անբացատրելի է. ակնարկուած թագաւորին իսկական անունն է «Սամուէլ»: իսկ «Ալուսիան» անունանուած է ա-

նոր եղբոր՝ Ահարոնի թոռնիկը, եւ թոռան որդին «Սամուէլ Ալուսիան»: Յամենայն դէպս 1041էն ետքը տեղի ունեցած ըլլալու է անուններու շփոթումը:

Սամուէլ ունեցաւ ուսար մը Ռոզոմիր-Ռոմանոս եւ երկու դուստր Միրոսլաւա եւ Կոստրա-Թէոդորա:


Միրոսլաւա ամուսինն է Գրիգոր Տարոնեցոյ Աշոտ որդւոյն, որ 991/992ին զերի ինկած էր Սամուէլի ձեռքը եւ բանտարկուած (Ասողիկ, Գ. 33, 34, էջ 261—262. Կեղրենոս, Բ. 449). ապա հանուած բանտէն Միրոսլաւայի թախանձանքով եւ ամուսնացած անոր հետ. Աշոտ իրբեւ նիգակակից ուղարկուեցաւ Դիւրաքիոն. բայց ապա մատնելով բերդաքաղաքը կայսեր, պատուեցաւ անկէ Մագիստրոս տիտղոսով (Կեղրենոս, էջ 451): Միրոսլաւայի անունը աւանդած է մեղի Միքայէլ Դեոլի եպիսկոպոսը (Prokič էջ 29, 41, Թ. 14):

5.

Կոմսաձագերու առաջին սերունդը այս վախճանը ունեցաւ:

Սամուէլ ցարին յաջորդն եղաւ որդին Ռոզոմիր (1014—1015). որուն մահէն ետքը ժառանգեց գահը Ահարոնի որդին Յովհաննէս-Վլադիսլաւ (1015—1018), որ ունեցաւ իր Մարիամ կնոջմէ հինգ մանչ եւ 6 աղջիկ զաւակներ:

Բուլղար նորագոյն պատմագիրը Վ. Ն. Չրատարսկի¹ այսպէս կազմած է Ահարոնեան տոհմաձառը.



Այս տեղ նկատի պիտի առնեմ առաւել-
լապէս Ալուսիանի գերդաստանը:

1. Պրուսիան (Պրեսան, Փրուսին) հօրը
մահէն ետքը իր երկու եղբայրներու (Ալու-
սիանի եւ Ահարոնի) հետ փորձեց շարունա-
կել զիմազրութիւնը կայսերական բանակին
զէմ, ալպանական լեռներու, յանուանէ
Թմորի բարձունքէն. թէեւ իր մայրն Մա-
րիամ անձնատուր եղած էր Վասիլ Բ. կայ-
սեր իր երկու մանչերու եւ 6 դուստրներու
հետ. ի վերջոյ անձնատուր եղան իրենք ալ:
Կայսրը մարզախրօրէն ընդունեցաւ զա-
նոնք. բաշխեց Պրուսիանին մազխտորոս եւ
Ալուսիանի եւ Ահարոնի պատրիկ տիտղոս-
ները: Պրուսիան կարգուեցաւ սարս հրամա-
նատար Բուկլլարիոն թեմին:

2. Ալուսիան. Բիւզանդական պատմա-
գիրն Միքայէլ Պսելլոս եւ ասիէ սղղուած
Սկիւլիցէս-Կեղերնոս եւ Զոնարաս, Ալու-
սիանը ներկայացուցած են իրրեւ որդի Ահա-
րոնի, որոնց հետեւած են նորագոյն պատ-
մագիրները. բայց այժմ Միքայէլ Գեւորլի
Լպիսիոպոսի բացայայտ վկայութեամբ կը
հաստատուի, թէ Ալուսիան երկրորդ որդին
է Վաղիսրաւի եւ թոռն Ահարոնի (Հմմտ.
Զլատարսկի, Բ., էջ 485—486):

Նորանշան անուն է Ալուսիան (յն. Αι-
λουσιανος, Psellus, 63, Αλουσιανος, Յովհ.
Կուրպաղաս, Կեղերնոս Բ., էջ 678. Մատթ.
Ոււհայեցի, էջ 195). «Ալուսիան» անունս սպա-
կրճատութեամբ վերածուած է Վասպուրա-
կանի մէջ «Ալուզ» (տես վարը): Ստուգա-
բանութիւնը յայտնի է:

Ալուսիան 1018/9ին Կ. Պոլիս էր իր մօրը
եւ եղբայրներու ու քոյրերու հետ: Վասիլ
կայսեր քաղաքականութիւնն էր Բուլղար ա-
ռաջաւորները գետնի վրայ թեման արեւե-
լեան ծայրագլանները, Վասպուրական եւ
Բարձր Հայք նահանգները, որպէս զի չփոր-

¹ В. Н. Златарски, История на Българската
Държава презь срѣднитѣ вѣкове. Загара Բ.,
Սոֆիա 1934, էջ 535: Այս աշխատութիւնն ինչ ինչ
քաղուածքներ, հայերէն թարգմանութեամբ, տրամա-
դրեց ինչ արար Ե. Գասպարեան, որուն կը յայտնեմ
խորին շնորհակալիքս:

² Ահարոն վեսա եւ կատեպան Վասպուրականի,
մագիտորոս եւ կառավարիչ Վրաստանի եւ զուքս Եղե-
սիոյ: Իր մասին Հմմտ. M. Lascaris, Sceau de Ra-
domir Aaron: Revue byzantino-slavica 3 (1931).
Թարգմ. Հանդ. Ամս. 1938, էջ 394—402:

Իր որդին Թէոօր կառավարիչ կարգուեցաւ Տա-
րոնի թեմին. իսկ Ռազմիւր ստացած է պրոնոբրոս եւ
զուքս տիտղոսները:

³ Աղլաճախի վրայ շղագիրներն իմ յաւելուած-
ներս են (տե՛ս Թ. 5):

ձուին վերագառնալ Բուլղարիա: Ալուսիան
Կուլարիուի Թէոօրուպոլիս, իրրեւ ստրա-
տեգոս Կարնոյ շրջանին: Ինչ որ գիտենք իր
կեանքէն, կը պարտինք Սկիւլիցէս-Կեղեր-
նոսի:

Կեղերնոս այսպէս կը ներկայացնէ անոր
պատմութիւնը. «Սեպտեմբեր ամսոյն, Ին-
գրիկոնի Թ. 6549 տարուոյ (1041): Ալուսեա-
նոս պատրիկ եւ սպարապետ (ստրատեգոս)
Թէոօրուպոլսոյ, Ահարոնի երկրորդ որդին,
յանկարծ փախաւ Կոստանդնուպոլսէն եւ
գնաց Դելիանոսին հետեւեալ պատճառով:
Ան ստրատեգոսն էր Թէոօրուպոլսոյ. ամբաս-
տանուեցաւ իրրեւ անարդար. Յովհաննէս
նախ քան պատճառը յայտնելը պահանջեց
իրմէ 50 լիտր ոսկի եւ այն կալուածքը, զոր
ունէր անոր կինը Գարսիանոնի մէջ: Երբ
անօգուտ մնացին իր առ Կայսր գրած թուղ-
թերը՝ յուսահատ հագաւ հայկական զգեստ-
ներ, եւ ցոյց տալով թէ ինքը Վասիլ Թէո-
օրականի ծառան է եւ կ'երթայ Թեսաղո-
նիկէ՝ կայսեր քով, փախաւ եւ հասաւ Ոս-
տրորոն, ուր կը գտնուէր այն փամանակ Դե-
լիանոս իր բանակով» (էջ 531): Կը յայտնէ
այնտեղ Բուլղարներուն իր ինքնութիւնը եւ
կ'ընդունուի խանդավառութեամբ իրրեւ թա-
գաւոր: Կը յանձնուի իրեն Թեսաղոնիկէի
պաշտպանութիւնը. կը յաղթուի: Երբ յու-
նական բանակը Միքայէլ կայսեր հրամանա-
տարութեան տակ կը յառաջանար, Ալու-
սեան վարանած՝ կ'որոշէ անձնատուր ըլլալ
Կայսեր, պայմանաւ որ երգճամբ խոստանայ
իրեն կայսրը պատուով վարուիլ: Բուլղա-
րիս կը նուաճուի միւսանգամ կայսերական
իշխանութեան տակ: Կայսրը կը շնորհէ
Ալուսիանին մագիստրոսութեան պատիւն
(Կեղր. 533, Lebeau, անդ, 163, 299—302):

Պատմութիւնը կը լսէ Ալուսիանի ան-
դրագոյն գործունէութեան մասին: Ալուսիան
մինչեւ 1040 գործած է Թէոօրուպոլիս (Կա-
րին) իրրեւ ստրատեգոս. ամուսնացած է
այն տեղ հայ իշխանուհիի մը հետ, որ ունէր
ի Գարսիանոն ազարակ մը: Ունեցած է
երկու ուսուր՝ Վասիլ եւ Սամուէլ եւ
զուսոր մը:

Միքայէլ Պսելլոս, որ մտէն կը ճանչ-
նար Ալուսիանը, կը գրէ թէ «ան ամէնէն՝
աչքի զարնուոյն էր իր եղբայրներու մէջէն՝
հաճելի բնաւորութեամբ, փայլուն մտքով եւ
կարկառուն անձնաւորութեամբ»: Իսկ Կե-

կաւմենոս կ'անուանէ զանիկա «բարեհոշակ
սպաշուստիչ զինուոր» (Strategicon, 22):

3. Վասիլ դուխ Եդեսիոյ: Մ. Ուս-
հայեցի յամն 1070 կը գրէ. Երբ Ալի-Աւլան
պաշարից Ուսհան, «էր տուին ի քաղաքն
Ուսհան՝ Վասիլին, Ալուսիանին որդին Բուլ-
ղարաց թագաւորին», զոր կը զրուսակ
զարաց թագաւորին» (էջ 195—
196): Հաւանօրէն ինքն է 1059ին արձանա-
գրութեան մը մէջ յիշուած «Վասիլ պրո-
րիկ», որ գործած է Մերձ-դանուրեան կող-
մերը (В. Н. Златарски, Една датирана при-
писка на гръцки отъ срѣдата на XI. вѣкъ.
Byzantinoslavica 1929, էջ 27—30):

4. Սամուէլ Ալուսիան վեստարք, պրոն-
դրոս եւ դուխ: Սամուէլ, որ կը կրէ իր ա-
նուն կից «Ալուսիան» յորջորջանքը, Ռո-
մանոս Դ-ի օրով վեստարք աստիճանով զի-
նուորական պաշտօն ստանձնած էր Արմե-
նիական թեմին մէջ, Սեւ ծովի հարաւային
ափին, Տրապիզոնի արեւմտեան կողմը,
Գլիսաւոր քաղաք ունենալով Ամասիոս: Ան
մասնակցած է 1068ին կայսեր Թուրքերու
զէմ մղած արշաւանքին. եւ երբ Մելիտինէի
հրամանատարը գիտունաւոր կերպով մեր-
ժած էր գիմաղրել Թուրքերու յարձակում-
ներուն եւ Ամորիոնի թալանութիւն, Ռոմա-
նոս առաւ անկէ՝ Գլիսաւոր հրամանատարու-
թիւնն եւ յանձնեց զայն Սամուէլի, որպէս
իրեն հաւատարիմ անձի: Իր անունը մաս-
նաւորապէս փայլեցաւ, երբ զսպեց Ռորերոս
Կրեպիլի, յունական վարձկան զօրքի նոր-
մանդ հրամանատարի ապստամբութիւնը
(1069)¹ որուն ի վարձ Կայսրը զանիկա
պրոնոբրոս աստիճանի բարձրացուց եւ ա-
նունեց զուքս (տուկ) կամ հրամանատար
Արմենիական թեմի հինգ արեւմտեան լե-
զէններուն, ինչպէս նաեւ տեղւոյն վարձ-
կան բանակին:

Ունինք իրմէ կնիք մը², որ վերաառու-
թիւնս կը կրէ.

ՈՂ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ՕԳՆԵԱ ՔՈՒՄ ԾԱՌԱՅԻՍ
ԱՍՄՈՒԷԼԻ ԱԼՈՒՍԻԱՆ, ՊՐՈՆՊՐՈՍ ԵՒ ՏՈՒԿ:

Ան մնաց այս պաշտօնին մէջ մինչեւ
1071, երբ զահրնկէց կաւ Ռոմանոս Դ.:

¹ Յովհ. Կուրպաղաս, Պատմութիւն, հրատ-
պէս Կեղերնոսի, Բ., էջ 678: «Արմենիական թեմի մէջ
կը ձմերէր վեստարքն Սամուէլ Ալուսիանոս բուլ-
ղար, Եղբայրն Կայսեր (Ռոմանոս Դ.) կնիք»:
² В. Н. Златарски, Моливдовуль на Самуила
Алусианъ. Изв. на Българск. Археолог. Инсти-
тутъ I (1921) էջ 86—89, 97—98:

5. Գրիգոր դուխ: Բիւզանդական աղ-
բիւրները չեն յիշատակած Ալուսիանի այս
երրորդ որդին, ինչպէս չեն յիշած նաեւ Վա-
սիլի անունը: Անոր չեն անդրազարձած
նաեւ նորագոյն պատմագէտները: Մեր աղ-
բիւրն է առ այս Թոմաս Արժրունուոյ Պատ-
մութեան կցուած Յիշատակարանը, որ
1303էն է: Այս տեղ յիշատակագիրը խօսելով
Արժրունի Արղլմես հրոտո-կուրոպաղատի
մասին կը գրէ թէ Արղլմես Ամիւկի եւ Աղ-
թամարի տէրը կնութեան առաւ Գրիգոր
տուկի զուստրն եւ Ալուզ իշխանաց իշխանի
թոռ Մարիամ: Այս «Ալուզը» ոչ այլ ոք է,
բայց Լեթ Ալուսիան, ուստի Գրիգոր կ'ըլլայ
Ալուսիանի որդին:

Յիշատակագրին համաձայն Արղլմես
կը սերէր Վասպուրականի Սենեքերիմ թա-
գաւորի արիւնէն: Երբ զաղթեց Արժրունեաց
թագաւորն Սենեքերիմ (1021) «յերկիրն
Յունաց», մնաց այն տեղ «մեծ իշխանն ա-
նուանեալն Խեղեմիկ, ազգակից արքային
Սենեքերիմայ եւ թագաւորազն ցեղիցն Արժ-
րունեաց»:

Խեղեմիկի սերունդն է. 1. Թոռնիկ Ա.
Իշխան. տէր Դաւիթ Ա., տէր Ստեփան-
նոս Ա., տէր Գրիգոր.

2. Թաղէոս.

3. Թոռնիկ Բ. «մեծ իշխան եւ սուրբ
մարտիրոս», որ «յուսուր մեծի տօնի ծնըն-
դեան Տեառն եւ Մկրտութեանն արժանի
եղիւ սոնուլ զպսակ մարտիրոսութեան բա-
ղամ արամբք ընտրելովք ի գաւառին Մա-
կաց ի գիւղն Ատիճանս» (էջ 309):

4. Արղլմեսի պոստոկուրոպաղատ: «Ի
սորս փամանակս Լին արիական ազգն
Ֆրանգաց եւ ազատեցին զուսուր քաղաքն
Երուսաղէմի ի ձեռաց այրագեացն եւ զայլ
եւս բազում աշխարհս ի թուին ՇՆՁ»
(1097):

«Սա էր տէր անմատոյց ամրոցացն Աղ-
թամարի եւ Ամիւկի... ամենիմասա պոսու-
կուրոպաղատ... որ առեալ իւր ամուսին
կուրոպաղատ... որ առեալ իւր ամուսին
զգուստրն Գրիգորի արեւելեան տուկի —
զթոռն մեծաշուք եւ արեւելեակալ իշխանաց
իշխանին Ալուզի — որ (Գրիգոր) էր տէր
եւ իշխեցոյ զաւառացն Մաղկոսան եւ Կո-
կովի եւ մեծ աւանին Անգեղ[տանն]...
իսկ սուրբ որոջն Գրիատոսի անուամբ Մա-
րիամ կոչեցեալ... որ եւ արկնաց արկին էր
ազգաւ...» (էջ 309—311):



Այստեղ ունինք Ալուզ=Ալուսիան իշխանաց իշխանը, որուն որդին է Գրեգոր տուկ եւ թոռնին Մարիամ տիկնաց տիկին: Ժամանակն է 1097էն յառաջ եւ վերջը: Գրեգոր կը ներկայացուի «արեւելեան տուկ» այն է ձոնէ (հայց. ձոնա) ֆր. Յո. իր իշխանութիւնը կ'ընդգրկէր Այրարատ նահանգին Ծաղկոտն եւ Կոզովիտ գաւառները. Անդր մեծ աւանն եւ ամրոցը, որ կը պատկանէր Ծաղկոտն գաւառին, եւ հաւանօրէն տուկին նստոցն էր (հմմտ. Հ. Հիւրճման, Հին Հայոց տեղւոյ անունները, էջ 246—250 եւ 302):

Հետեւաբար անուշադրութեան պէտք է վերագրել Գրեգոր տուկի նոյնացումը Գրեգոր Մազիսարոսի հետ. որով Ալուզ համարուած է Մազիսարոսի պապն եւ վասակ Հորամի աները, իսկ Մարիամ՝ Մազիսարոսի դուստրը (Հ. Ղ. Ալիշան, Ծնորհալի եւ պարագայ իւր, էջ 12, Ազգածառ եւ 107. իրեն հետեւած է Հ. Աճառեան, Անձնանուններ ի հաւարան, Ա. 84, 1. Գ. 253, 21. Թէեւ անդ, Ա. 84, 2 եւ Գ. 253, 22 կը դանդաղանէ: Ալիշան, Այրարատ, էջ 495ր վարանքի մէջ է):

Արդմսեհի եւ Մարիամի ամուսնութեան ընծիւղեցան «ուստերք եւթն եւ դստերք հինգ»: Երեցագոյնն է Դաւիթ, որ ապա կաթողիկոսացաւ, եւ կրտսերն Ստեփանոս (Բ.) «կոչեցեալ ըստ հայրենի ազգին եւ ըստ մայրենի անուանակոչութեանն՝ սրբանեալ մայր իւր տիկնաց տիկինն կոչաց զնա յանուն հաւուն իւրոյ Ալուզ. եւ ըստ յառաջագրութեանն իւրոյ՝ ի սուրբ թագաւորացն պատիւ եւ անուն մեծութեան ընկալեալ... եւ մեծ իշխանն Ալուզ օրհնեցաւ յԱստուծոյ եւ ի հօրէն իւրմէ Արդմսեհէ»: «Եւ մեծ եւ ամենիմաստն Արդմսեհ Կուրապաղաւան բաժանեաց զհայրենիսն իւր եւ ես ի ձեռն որդւոյ իւրոյ Ալուզի... զանառիկ ամրոցն Ամբի. զի նա կարող էր ի զիմի ունել անօրէն ազգացն Իսմայէլացոց»:

Արդմսեհ կը վախճանի 1121/22ին եւ կը թաղուի Աղթամար ի դուռն Ս. Խաչին. Երկու տարի ետքը կը մեռնի (1123/24) Մարիամ եւ «եղաւ ի նոյն տապանի» (էջ 314—315):

Ստեփանոս Ալուզի յիշատակութիւնը կ'ըլլայ 1161ին գրուած եւ շատ գէշ պահուած Յիշատակարանի մէջ. «Յամի վեցհարեւ(ր)երորդի եւ տասն(ե)րորդի թուականութեանս Հայոց (ե)ս տէր վահան սուրբ

Խաչի եպիսկոպոս (ցան)գացող Լոկալ (ս)տացա զուրբ աւ(ետար)ա(նս) ի տէր Ստեփանոսէ որդւոյ Կուրապաղաւան (եւ) եղբար տեառն Դաւիթ Հայոց Կաթողիկոս (սին): Արդ ազաչեմ... զտէր Ստեփանոս յազալիս ձեր յիշեալիք եւ զԳրիստոսատու(ր)» (Յովսէփեան, Յիշատակարանք, Ա., էջ 380—381):

Ստեփանոսի «լուսածաղիկ» որդին է Խեղեմիկ Բ.: Սա իր դուստրը կին կու տայ ՍԼՖեդին արքայունի. եւ օժիտ կը բաշխէ Աղթամարի կէտը: Ծերութեան հասակին կըզուոյն միւս կէսն ալ կը վաճառէ իր փեսային: Ունինք իրմէ արձանագրութիւնս Հոռոմոսի եկեղեցւոյ պատին վրայ.

ԵՍ ԽԵՏԵՆԵԿՍ ՈՐԳԻ ԱՆՈՒՅԻ ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԽՄ ՄԱՐՁԱՆ ՏՈՒՄԲ Ի ՍՈՒՐԲ ՈՒՆՏՆ ԶԹԷՁԱՆՈ ՇԱՄԲՆ... ՈՐ ԻՇՆԱՆՆ ՄԵՔ ԷՐ ՏՈՒՆԷԼ. ՏԵՐ ԲԱՐՍԵՂ ԵՒ ԱՅԼ ԵՂԲԱՐՅՍ ՍԱՀՄԱՆՅԵՏԻՆ ԶՏՕՆ ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ... ՈՂԳ:

(Կոստանեանց, Վրժական տարեգիր, էջ 88): Տարին ՈՂԳ կարգա՝ ՈՂԳ (1185):
Հ. Ն. ԱԿՆԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻՍ Ա. ԿԵԹՈՂԻԿՈՍ ԸՂՈՇԱՐԵՑԻ
ԿԵՆՆԵՆ ԵՒ ԳՐԵԿԵՆ ԳՐԵԾՈՒՆԵՑԻԹԻՆԵ
ՄԱՀՈՒՆ ԶՈՐՐՈՐԳ ԳԱՐԱԳԱՐՁԻ ԱՌԻԹՈՂ

Թէպէտ 10 տարւոյ յապաղութեամբ կու գամ յիշեցնել Աղթամարի Գրեգորիս Ա. Մեծ կաթողիկոսի մահուան տարեգրածը, բայց յուսով եմ թէ պիտի արդարացնէ յապաղումս աննպաստ ժամանակը, որ կը բովանդակէ այդ անցեալ 10 տարիները:

Գրեգորիս Աղթամարցի տաղասաց մըն է, համեստ եւ շնորհալի, սիրուած հայ տաղասէրներէ չորս դար շարունակ իր գողտրիկ գեղեցիկահիւս, հոգեշունչ եւ հոգեշահ տաղերու համար, տաղեր որոնք մնացած են զուտով եւ հոտով անթարամ եւ պահած իրենց ներքին եւ արտաքին հրապրը անշիջանելի: Չկան Տաղարաններ, որոնք ներս առած չըլլան իրենց ծոցը Աղթամարցւոյ տաղերէն գոնէ մէկը:

Մեր Տաղասացը կը ներկայանայ նաեւ նկարիչ, ծաղկող ձեռագիրներու երգիներանգ եւ զուեագարդ. իր կարգին նաեւ վարպետ, ուսուցանիչ նկարչութեան արուեստը, եւ քաջալերիչ արուեստին պայծառութեան:

ՄԱՍՆ Ա.

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ջարմանալի չէ, եթէ տեսնենք, որ այս հանդամանքներէն զրգուած շատերը ուշադրութեան առած են Տաղասացս եւ իր տաղերը: Կը յիշեմ այս տեղ ժամանակագրական կարգով այն հեղինակները, որ խօսած են Տաղասացիս եւ իր գործերուն վրայ:

Հ. Ղ. Յովհաննիս, Գրեգորիս Աղթամարցի, Հանդ. Ամս., 1896, էջ 116—119 = Միջնադարեան ազգ. Տաղաչափութիւն ուսուցիչական, Վիեննա 1911, էջ 33—41:

Կ. Կասաբեանց, Գրեգորիս Աղթամարցին եւ իւր տաղերը. Յաւելուած՝ Աղեքսանդրի Պատմութեան Կաճանքը, Տիգրիս 1898, էջ 126: Գրախօսած՝ Հ. Յ. Տ(աշեան), Հանդ. Ամս., 1899, էջ 340—342:

Հ. Յ. Տաշեան, Ուսումնասիրութիւնք Ստոյն-Կալիսթենայ վարուց Աղեքսանդրի, Վիեննա 1892, էջ 133—137 (ի մասին Կաճանքը):

Հ. Մ. Պոստուրեան, Գրեգորիս Աղթամարցի, Բազմալէզ 1905, էջ 491—500, 544: Առ այս Հ. Ն. Ակիւնան, Հանդ. Ամս., 1910, էջ 32:

E. Teza, La mia vigna, Ե. Տեզա, Գրեգոր Աղթամարցւոյ «Իմ այգին» քերթուածը, Բազմալէզ 1907, էջ 18—21:

Վ. Փափագեան, Պատմութիւն Հայոց զբաղանութեան, Թիֆլիս 1910, էջ 242—246. Յաւելուած (Նմոյշներ), էջ 117—127 (Երեք տաղ):

Խ. Լեւոնեան, Գրեգորիս «Գանձասաց» եւ իր երգերը. Վանաստր 1911/12, Թ. 11—12:

— Գրեգորիս Աղթամարցի եւ իր զբուածքներէն նմոյշներ. Կոչնակ Հայաստանի, 1914, էջ 492—495:

Շաւարշ Մ. Վ. Սահակեան, Գրեգորիս կաթողիկոս Աղթամարցի եւ Պզնձէ Քաղաքին թարգմանութիւնը, Տաճար (Կ. Պ.) 1912, էջ 595—596:

Կ. Կասաբեանց, Роза и Соловей. Къ положенію Арманъ въ XVI вѣкѣ (по поводу стихотворенія Григорія Ахтамарскаго. Москва 1913). (հմմտ. Գ. Լեւոնեանի գրախօսականը՝ Մշակ 1914, Թ. 111):

Տրդատ եպ. Պալիան, Հայ Աշուղներ, հատոր Բ., Ջմիւռնիա 1914, էջ 99—151 («Գրեգորիս Աղթամարցի»):

Հ. Ն. Ակիւնեան, Գրեգորիս Աղթամարցի. Հանդ. Ամս., 1915, էջ 18—64:

Գարեգին եպ. Յովսէփեան, Գրեգորիս Աղթամարցի (զբաղան-կենսագրական նոր նիւթերով), Արարատ, 1919, էջ 1—40:

— Նորից Գրեգորիս Աղթամարցու մասին. Հանդ. Ամս., 1930, էջ 41—60:

Հայկ Աճեմեան, Գրեգորիս Աղթամարցի. Յուսարեւր, 1932, Թ. 197, 201—203:

2. ԺԱՄԱՆԱԿԸ
1480—1550

Փոթորիկաց, մրբկածուի էր քաղաքական միջնորդը:

Յատաջակողմեան արեւելքի տէրն էր Ուզուն Հասան Ազ-դոյունլի. կ'իշխէր Պարսկաստանի, Ատրպատականի, Հայաստանի եւ Միջնադարի: Աղխարեր Լոլա իրեն 1473ի Գրեգորի քով կրած պարտութիւնը. որով Գրեգորի քով կրած պարտութիւնը սահմանեանք ստեղծեց իր Հայաստանի սահմանէն ներս: Ուզուն Հասանի ժառանգին՝ Եաղուբ-բէգի († 1490) մահէն ետքը երկիրը մատուցեցաւ անիշխանութեան. ծագեցաւ մատուցեցաւ անիշխանութեան. ծագեցաւ Գանձին շուրջը իր Եղբարց եւ որդւոց եւ ազգականներու մէջ տարաձայնութիւն. որուն ճակատագրէն Եղաւ ընտանեկան պատեհեանութիւնն Եղաւ ընտանեկան պատեհեանութեան ընդարձակ պետութեան զարգում. բուսան ընդարձակ պետութեան զարգումն անհանգիստեց մէջ ինքնազուլս պետեան, որոնք բախեցան իրարու հետ: Այս անիշխանութեան տարիներուն գլուխ բարձրացուցին նաեւ զանազան ցեղեր, անոնց թուին մէջ Գուրգերը: Նահանգները ձեռքէ ձեռք կ'անցնէին, բանակները զերար կը կոտորէին, քաղաքները կը միայն, անդաստանները անաստար կը վերածուէին, բնակչութիւնը կը կոզուպուէր, կը գերուէր, կը հարստահարուէր: Երկիրը դժոխքի վերածուած էր:

Այս անիշխանութեան թէեւ վերջ տուաւ 1500ին Շահ-Իսմայէլ († 1525), այժմեան Պարսկաստանի հիմնադիրը, բայց պատեհաբար շարժումները շարունակուեցան իր եւ իր որդւոյն Շահ-Թահմասպի († 1576) օրով անընդհատ: 1534ին Հայաստանի մեծ մասին տիրացան Օսմանեանք:

Ժամանակի նկարագիրը ըմբռնելու համար բաւական է աչք մը նետել ժամանակակից յիշատակաւաններու վրայ, որոնք գրուած են Աղթամարի շրջակայքը: